

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

+374 60 61 61 00
byblosbankarmenia.am



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տվյալ ամփոփաթերթում ներառված սակագներն ու պայմանները կարող են փոփոխվել: Բիբլոս Բանկ Արմենիայի կողմից տրամադրվող ՓՄՁ ֆինանսավորման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել +374 60 61 61 00 հեռախոսահամարին, այցելել Բանկի պաշտոնական կայք՝ byblosbankarmenia.am, կամ դիմել ցանկացած մասնաճյուղ:

Մեր մասնաճյուղերը տեղակայված են հետևյալ հասցեներում.

- Աբովյան 6, Երևան
- Պապ թագավորի 18/3, Երևան
- Կոմիտաս 38/2, Երևան
- Բաղրամյան 84/1, Երևան

Դուք ունեք Բանկի հետ հաղորդակցվելու իրավունք ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:

ՓՄՁ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Բիբլոս Բանկ Արմենիան կատարում է ՓՄՁ ֆինանսավորում և վերաֆինանսավորում՝ բիզնեսի շարունակական զարգացումն ապահովելու և ավելի համարձակ ծրագրեր խրախուսելու համար.

- ✓ Շրջանառու միջոցների համալրում
- ✓ Սարքավորումների ձեռքբերում
- ✓ Բիզնեսի խթանում
- ✓ Մեքենայի ձեռքբերում
- ✓ Անշարժ գույքի ձեռքբերում, վերանորոգում, կառուցապատում
- ✓ Գործող վարկերի տեղափոխում / միավորում

1

ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎՈՎ ՎԱՐԿ

Գույքի գրավով վարկավորման դեպքում ֆինանսավորվում է գույքի շուկայական արժեքի մինչև 70%-ը: Վարկի տրամադրման միջնորդավճարը կազմում է վարկի գումարի 1%-ը, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ:

ԱՐԺՈՒՅԹ	₴	\$	€
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ	Սկսած 12%-ից	սկսած 9%-ից	սկսած 7%-ից
ԳՈՒՄԱՐ ՆՎՁ.	5,000,001	13,000	13,000
ԳՈՒՄԱՐ ԱՌՎԼ.	150,000,000	300,000	300,000
ԺԱՄԿԵՏ	12-ից մինչև 180 ամիս		

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կազմում է՝

- ⌚ Սկսած 12%-ից, ֆիքսված առաջին 3 տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 5%
- 💵 Սկսած 9%-ից, ֆիքսված առաջին 3 տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 5%
- 🇪🇺 Սկսած 7%-ից, ֆիքսված առաջին 3 տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 7%

*Բանկի հաշվարկային տոկոսադրույքը սահմանվում է Բանկի կողմից տարբեր արժույթների համար և արտացոլում է Բանկի տոկոսակիր պարտավորությունների միջին կշռված ծախսատարությունը:

ՕՎԵՐԴՐԱՑՏ (ԳՐԱՎՈՎ)

Վարկի տրամադրման միջնորդավճարը կազմում է վարկի գումարի 1%-ը, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ:

ԱՐԺՈՒՅԹ	₴	\$	€
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԶ	Սկսած 12%-ից	սկսած 9%-ից	սկսած 7%-ից
ԳՈՒՄԱՐ ՆՎՁ.	5,000,001	13,000	13,000
ԳՈՒՄԱՐ ԱՌՎԼ.	150,000,000	300,000	300,000
ԺԱՄԿԵՏ	12-ից մինչև 180 ամիս		

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կազմում է՝

- ₴ Սկսած 12%-ից ֆիքսված
- ₪ Սկսած 9%-ից ֆիքսված
- € Սկսած 7%-ից ֆիքսված

ԱՆԳՐԱՎ ՎԱՐԿ

Վարկի տրամադրման միջնորդավճարը կազմում է վարկի գումարի 1%-ը, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ:

ԱՐԺՈՒՅԹ	₴	\$	€
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԶ	Սկսած 13%-ից	սկսած 12.5%-ից	սկսած 10.5%-ից
ԳՈՒՄԱՐ ՆՎՁ.	5,000,001	13,000	13,000
ԳՈՒՄԱՐ ԱՌՎԼ.	25,000,000	50,000	50,000
ԺԱՄԿԵՏ	12-ից մինչև 36 ամիս		

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կազմում է՝

- ₴ Սկսած 13%-ից, ֆիքսված առաջին տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 7%
- ₪ Սկսած 12.5%-ից, ֆիքսված առաջին տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 8%
- € Սկսած 7%-ից, ֆիքսված առաջին 3 տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 7%

*Բանկի հաշվարկային տոկոսադրույքը սահմանվում է Բանկի կողմից տարբեր արժույթների համար և արտացոլում է Բանկի տոկոսակիր պարտավորությունների միջին կշռված ծախսատարությունը:

ՕՎԵՐԴՐԱՑՏ (ԱՆԳՐԱԿ)

Վարկի տրամադրման միջնորդավճարը կազմում է վարկի գումարի 1%-ը, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ:

ԱՐԺՈՒՅԹ	₴	\$	€
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԶ	Սկսած 12%-ից	սկսած 9%-ից	սկսած 7%-ից
ԳՈՒՄԱՐ ՆՎՁ.	5,000,001	13,000	13,000
ԳՈՒՄԱՐ ԱՌՎԼ.	25,000,000	50,000	50,000
ԺԱՄԿԵՏ	12-ից մինչև 36 ամիս		

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կազմում է՝

- ⌚ Սկսած 13%-ից ֆիքսված
- ⌚ Սկսած 12.5%-ից ֆիքսված
- ⌚ Սկսած 10.5%-ից ֆիքսված

ՄԵՔԵՆԱՅԻ ԳՐԱՎՈԿ ՎԱՐԿ

Վարկի տրամադրման միջնորդավճարը կազմում է վարկի գումարի 1%-ը, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ:

ԱՐԺՈՒՅԹ	₴	\$	€
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԶ	Սկսած 13%-ից	սկսած 10.5%-ից	սկսած 8.5%-ից
ԳՈՒՄԱՐ ՆՎՁ.	5,000,001	13,000	13,000
ԳՈՒՄԱՐ ԱՌՎԼ.	45,000,000	90,000	90,000
ԺԱՄԿԵՏ	12-ից մինչև 72 ամիս		

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կազմում է՝

- ⌚ Սկսած 13%-ից, ֆիքսված առաջին 3 տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 6%
- ⌚ Սկսած 10.5%-ից, ֆիքսված առաջին 3 տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 6%
- ⌚ Սկսած 8.5%-ից, ֆիքսված առաջին 3 տարվա համար
Մնացած տարիների համար՝ Բանկի հաշվարկային դրույք* + 7%

*Բանկի հաշվարկային տոկոսադրույքը սահմանվում է Բանկի կողմից տարբեր արժույթների համար և արտացոլում է Բանկի տոկոսակիր պարտավորությունների միջին կշռված ծախսատարությունը:

i

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից: Վարկը ԱՄՆ դոլարով կամ Եվրոյով տրամադրելու դեպքում փոխարժեքի փոփոխությունը հնարավոր է ազդեցություն ունենա վարկի մարումների վրա:

2

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱՁԵԿՈՒՄ

Վարկային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դրանք մարվում են վարկային պայմանագրով նախատեսված ապահովման միջոցների և Հաճախորդի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բանկը կարող է բռնագանձում տարածել գրավադրված գույքի վրա ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով: Վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում Հաճախորդի վարկը կարող է դասակարգվել, և դրա վերաբերյալ տեղեկատվությունը Բանկի կողմից կարող է տրամադրվել ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին և վարկային բյուրոներին, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի վարկային պատմության վրա:

Վարկի գումարի կամ դրա մի մասի, ինչպես նաև տոկոսների մարումների ուշացման դեպքում ժամկետանց վարկի նկատմամբ դադարում են գործել վարկային պայմանագրով սահմանված տոկոսները և այդ գումարների վրա հաշվարկվում են տոկոսներ տարեկան 24%-ի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար: Ժամկետանց գումարներ են համարվում վարկային պայմանագրով սահմանված ժամկետներում չմարված գումարները: Այլ վճար չի գանձվում ժամկետանց գումարների դիմաց:

Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ մարելու վարկը կամ դրա մի մասը:

Ֆիքսված տոկոսադրույքի գործողության ընթացքում վարկի վաղաժամ մարման դեպքում (մասնակի կամ ամբողջական) կիրառվում է տույժ՝ վաղաժամկետ մարվող գումարի 5%-ի չափով:

ՀԱՅՏԱՏՈՒԻ ՎԱՐԿԱՐԺԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայտատունն պետք է լինի ՀՀ ռեզիդենտ, 21 տարեկանից բարձր, իսկ ԱԶ վարկառունն պետք է լինի ՀՀ ռեզիդենտ, 21-63 տարեկան (վարկային պայմանագրի գործողության ընթացքում):

Հայտատունն որպես վարկի ապահովման միջոց պետք է ներկայացնի անշարժ բնակելի և/կամ հասարակական նշանակության գույք (շրջանառու կապիտալը մեծացնելու, սարքավորումներ ձեռք բերելու, առևտրային տարածք գնելու, վերանորոգելու կամ կառուցապատելու համար) կամ տրանսպորտային միջոց (տրանսպորտային միջոց ձեռք բերելու համար):

Փոքր բիզնես վարկը տրամադրվում է անհատ ձեռնարկատերերին, սահմանափակ պատասխանատվությամբ, բաց և փակ բաժնետիրական ընկերություններին, որոնց աշխատակիցների առավելագույն թիվը չի գերազանցում 49 հոգին:

Տարեկան շրջանառությունը պետք է լինի 25 մլն ՀՀ դրամից (\$50,000 կամ €50,000) մինչև 500,000,000 ՀՀ դրամի (\$1,000,000 կամ €1,000,000) միջակայքում:

Վարկի հաստատման պահին բիզնեսը պետք է գործի առնվազն 2 հաշվապահական տարի (նվզ. 1 տարին՝ շահույթով):

Վարկ/գրավ հարաբերակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

Հասարակական նշանակության գույք ձեռք բերելիս՝ լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում, վարկի ֆինանսավորումը կարող է կազմել մինչև 100%՝ պահպանելով վարկ/գրավ հարաբերակցությունը, 70%՝ ՀՀ դրամի, և 65%՝ արտարժույթի դեպքում:

Անգրավ վարկերը տրամադրվում են շրջանառությունը Բիբլոս Բանկ Արմենիա տեղափոխելու դեպքում: Վարկի գումարը կարող է կազմել տարեկան շրջանառության առավելագույնը 10%-ը, բայց ոչ ավելի, քան \$50,000-ը (25 մլն ՀՀ դրամը, կամ €50,000-ն):

ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԿԱՐԳԸ

Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ հիմք ընդունելով տարին 360 օր:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Կախված բանկի ռիսկի գնահատման արդյունքներից՝ վարկի դիմումը կարող է հաստատվել ավելի բարձր տոկոսադրույքով:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ հայտատուի կողմից, դիմումը ներկայացնելուց 15 օրվա ընթացքում: Ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, սակայն Բանկին տրվում են պատճենները:

Հայտատուի վերաբերյալ տվյալներ

- ✓ Կազմակերպության տնօրենի, հիմնադիրների և երաշխավոր(ներ)ի, ինչպես նաև առկայության դեպքում գրավատու(ներ)ի անձնագիր և սոց. քարտ
- ✓ Պետական ռեգիստրի վկայական
- ✓ Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք
- ✓ ՀՎՀՀ
- ✓ Ընկերության կանոնադրությունը (ներառյալ բոլոր փոփոխությունները)
- ✓ Գործունեության վայրի մասին հավաստող փաստաթուղթ (սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր)
- ✓ Վարկի տեղափոխության դեպքում՝ գործող պարտավորության մնացորդի քաղվածք, ինչպես նաև վարկային և գրավի պայմանագրերը

Եկամտի վերաբերյալ տվյալներ

- ✓ Ֆինանսական հաշվետվություններ Վերջին 2 հաշվապահական տարվա համար
- ✓ Հաշվապահական հաշվեկշիռ

- ✓ Եկամուտ-ծախս հաշվետվություն
- ✓ Հարկային հաշվետվություն (օր. Եկամտային հարկի, ԱԱՀ-ի, շահութահարկի և այլն)
- ✓ Տեղեկանք ՏՀՏ-ից բյուջեի հանդեպ առկա պարտավորությունների վերաբերյալ
- ✓ Ծախսերի բացվածք
- ✓ Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի բացվածք
- ✓ Վերջին 12 ամիսների բանկային հաշվի քաղվածք
- ✓ Փոխառության պայմանագիր (փոխառության առկայության դեպքում)
- ✓ Բանկի պահանջով այլ տվյալներ և փաստաթղթեր ըստ անհրաժեշտության

Գրավադրվող գույքի վերաբերյալ փաստաթղթեր

- ✓ Անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի դեպքում՝ գրավադրվող գույքի սեփականության վկայականը և հիմքերը
- ✓ Գրավադրվող անշարժ գույքի գնահատման հաշվետվություն՝ Բանկի հետ համագործակցող ընկերությունների կողմից
- ✓ Մեքենայի ձեռքբերման դեպքում՝ ավտոսրահից տեղեկանք ձեռքբերվող տրանսպորտային միջոցի մասին (տարեթիվ, վազք, արժեք, VIN կոդ)

Կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր:

Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

Համաձայն «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի՝ Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) միասնական հաշվետվողական ստանդարտի (CRS - Common Reporting Standard) պահանջներին՝ Բանկը Ձեր՝ օտարերկրյա պետությունների (տարածքների) հարկային ռեզիդենտ հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

6

ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՈՒՄ

- ✓ Վարկի ձևակերպման գործընթացն իրականացվում է միայն Բիբլոս Բանկ Արմենիայի մասնաճյուղերում:
- ✓ Վարկը տրամադրվում է անկանխիկ՝ հաճախորդի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
- ✓ Վարկը տրամադրվում է հաճախորդի կողմից մասնաճյուղում պայմանագրերը ստորագրելու օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացվում են:
- ✓ Վարկի մարումներն իրականացվում են ամսական հավասարաչափ վճարումներով. նախ՝ հաշվարկված տոկոսագումարը, հետո՝ մայր գումարը: Տույժերի առկայության դեպքում, վերջիններս վճարվում են առաջին հերթին:
- ✓ Վարկի տրամադրման դրական կամ բացասական որոշման կայացման վրա ազդող հիմնական գործոններն են՝
 - ա. վարկային պատմությունը,
 - բ. վարկի նպատակային օգտագործման հիմնավորվածությունը,

- գ. վարկառուի կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը,
- դ. հաճախորդի վարկունակությունը (ֆինանսական վիճակ),
- ե. հաճախորդի վարկարժանությունը (Վարկառուի անձնական որակներ, վարկ ստանալու իրավական խոչընդոտների բացակայություն և այլն),
- զ. վարկի ապահովվածություն հանդիսացող գրավը:

Բիբլոս Բանկ Արմենիան Ձեր վարկի դիմումը կուսումնասիրի անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 7 օրվա ընթացքում: Դրական կամ բացասական որոշման մասին Բանկը Ձեզ կտեղեկացնի 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով:

7 ԲԱՆԿԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԳՆԱՀԱՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկը համագործակցում է հետևյալ գնահատող կազմակերպությունների հետ.

- | | |
|----------------------|-------------------|
| ■ Կոստ Կոնսալտ ՍՊԸ | ■ Գարդի ՍՊԸ |
| ■ Ամիտոնաս Գրուպ ՍՊԸ | ■ ՌՎՄ Կոնսալթ ՍՊԸ |
| ■ Օլիվեր Գրուպ ՍՊԸ | ■ Ալտավիպ ՍՊԸ |
| ■ ՎԻ ԷՄ - ԱՐ ՓԻ ՍՊԸ | ■ SS գրուպ ՍՊԸ |

8 ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ (ՆՄԱՆ ՊԱՅԱՆՋԻ ԴԵՊՔՈՒՄ)

Եթե Վարկառուն չի կատարում պարտավորությունները, ապա Երաշխավորը պարտավոր է վճարել նրա փոխարեն՝ այդպիսով վնասելով իր վարկային պատմությանը և կանգնելով գույքը կորցնելու վտանգի առջև:

Երաշխավորին տրամադրվում է վարկային և երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:

Հաղորդակցումն իրականացվում է Երաշխավորին հարմար եղանակով:

Բանկը պարտավոր է Երաշխավորին 7 օր առաջ ծանուցել պայմանագրի պայմանների փոփոխության մասին.

Բանկը պարտավոր է Երաշխավորին 1 օր առաջ հիշեցնել առկա պարտավորության վերաբերյալ, ինչպես նաև վարկի մարման ուշացման դեպքում այդ մասին տեղեկացնել նրան ամենաուշը մեկ օր հետո:

Երաշխավորը կարող է ցանկացած ժամանակ Բանկից պահանջել տեղեկություն վարկի մնացորդի չափի մասին:

Երաշխավորը կարող է Վարկառուից հետ ստանալ իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՎԱՆՈՒՄ	ՍԱԿԱԳԻՆ (ՀՀ ԴՐԱՄ)
Գրավի առարկայի հետ կապված համաձայնություններ*	5,000
Հաջորդող գրավի համաձայնություն*	5,000
Պետական համարանիշի փոփոխության համաձայնություն	5,000
Տեխ. անձնագրում փոփոխության համաձայնություն*	5,000
Գրավի առարկայի փոփոխության համաձայնություն*	5,000
Ընտանիքի անդամի հաշվառման կամ հաշվառումից հանելու համաձայնություն*	1,000
Գրավներից որևէ մեկի գրավից ազատման համաձայնություն (չի կիրառվում ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում)*	5,000
Սեփականության վկայականի փոփոխության համաձայնություն*	5,000
Իրավաբանական անձի վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվության ստացում Իրավաբանական անձանց ռեգիստրից*	5,000

*Ներառյալ ԱԱՀ

Կարևոր նշում. սակագները կիրառելի են գրավի յուրաքանչյուր առարկայի համար:

Վարկի քաղվածքը կարող եք ստանալ Ձեր նախընտրած եղանակով: Քաղվածքները և տեղեկանքը տրամադրվում են ըստ ստորև ներկայացված սակագնի՝

ԱՆՎԱՆՈՒՄ	ՍԱԿԱԳԻՆ (ՀՀ ԴՐԱՄ)
Քաղվածքի տրամադրում՝ յուրաքանչյուր ամիս	անվճար
Քաղվածքի տրամադրում լրացուցիչ՝ մինչև 6 ամիս*	3,000
Քաղվածքի տրամադրում լրացուցիչ՝ 6 ամսից ավելի*	6,000
Հաշվի կամ վարկի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում*	3,000

*Ներառյալ ԱԱՀ